Տիրոջ խորհուրդը միսիոներներին՝ Վարդապետություն և Ուխտեր 30–36 գլուխներում:

Ուսումնասիրեք Փրկչի խորհուրդը ստորև թվարկված մարդկանց և քննարկեք հաջորդող հարցերը:

Վարդապետություն և Ուխտեր 31.1–5 (Թոմաս Բ. Մարշ)

- Այս հատվածներում որո՞նք են այն ճշմարտությունները, որոնք կարող են օգնել ձեզ հասկանալ, թե ինչու է Փրկիչը խնդրում մեզ կիսվել Իր ավետարանով:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Հիսուս Քրիստոսը անվանել Իր ավետարանը «մեծ ուրախության ավետիք» (հատված 3): Ինչո՞ւ է Փրկչի ավետարանը ձեզ ուրախություն պարգևում:

Վարդապետություն և Ուխտեր 33.1–7, 10–12 (Էզրա Թայեր և Նորթրոպ Սվիթ)

- Այս հատվածներում որո՞նք են այն ճշմարտությունները, որոնք կարող են օգնել ձեզ հասկանալ, թե ինչու է Փրկիչը խնդրում մեզ կիսվել Իր ավետարանով:
- Ինչո՞ւ է Տերը ցանկանում, որ Իր ավետարանը հայտարարվի բարձր ձայնով՝ ինչպես «փողի ձայնը» (հատված 2):

Վարդապետություն և Ուխտեր 34.1–7 (Օրսոն Պրատ)

- Այս հատվածներում որո՞նք են այն ճշմարտությունները, որոնք կարող են օգնել ձեզ հասկանալ, թե ինչու է Փրկիչը խնդրում մեզ կիսվել Իր ավետարանով:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ ենք մենք «ավելի օրհնված» (հատված 5), քանի որ կանչվել ենք Փրկչի ավետարանը քարոզելու, այլ ոչ միայն պարզապես ավետարանին հավատալու համար:

Վարդապետություն և Ուխտեր 35.1–3, 6–8, 12–13 (Սիդնի Ռիգդոն)

- Այս հատվածներում որո՞նք են այն ճշմարտությունները, որոնք կարող են օգնել ձեզ հասկանալ, թե ինչու է Փրկիչը խնդրում մեզ կիսվել Իր ավետարանով:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Տերը կանչում «անուս» և անփորձ մարդկանց՝ հայտարարելու Իր ավետարանը երկրի «ազգերին» (հատված 13):

© 2023 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_151-1